

ՀՈՒՆԱԼԱՏԻՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81'373

DOI: 10.56246/18294480-2024.17-35

ՊԱՊԻԿՅԱՆ ՍԻԼՎԱ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող
էլփոստ՝ papikyansilva@yandex.ru

Ընդհանուր փոխառությունների մեջ առանձնացող հայրկական փոխառությունները բնորոշվում են նրանով, որ վերաբերում են որևէ ժողովրդի նիստուկացին, սովորություններին, իրերին, հոգեկերպածքին: Սովորաբար դրանք գործածվում են, երբ խոսքը տվյալ ժողովրդին բնորոշ իրույթների (ռեալիաներ) մասին է: Դրանք անթարգմանելի են, չունեն հոմանիշներ և հականիշներ, ինչպես՝ սարի, իկեբանա, կիմոնո, գեյշա, մեչեփե, մուժիկ, չաստուշկա. յաթաղան, վեզիր, միկադո, շահ և այլն: Հայտնի է, որ հայրկական փոխառությունները բաժանվում են 2 խմբի՝ նեղ և լայն ընդգրկում ունեցողների:

Ի տարբերություն տերմինների, որոնք արտահայտում են գիտության, տեխնիկայի, մշակույթի որևէ բնագավառին վերաբերող հասկացություններ և ընդհանուր են շատ ժողովուրդների համար, հայրկական փոխառությունները մտնում են այլ լեզուների բառապաշար, որի լեզվակիր հանրույթը կարող է ծանոթ չլինել փոխաբառ ժողովրդի մշակույթին, սովորություններին, հոգեկերպածքին. հիմնականում դա տեղի է ունենում թարգմանական գրականության և զանգվածային լրատվության միջոցներով: Հաճախ դրանք ձեռք են բերում միջազգային տարածում:

Մեր նպատակն է այս հոդվածում դիտարկել հունալատինական ծագման հայրկական փոխառությունները, որոնց մի մասը անմիջական, մի մասն էլ միջնորդավորված փոխառություններ են: Տարածվելով՝ սկզբնապես 1-2 լեզվում հանդես եկող հայրկական փոխառությունները կարող են համալրել տերմինների շարքերը, հմմտ. ցունամի(ճապ.), տորնադո (իսպ.) և այլն: Որոշ դեպքերում դժվար է որոշել հայրկական փոխառությունների և տերմինների սահմանները:

Բանալի բառեր՝ հայրկական փոխառություն, տերմին, իրույթ, բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում, անմիջական փոխառություն, միջնորդավորված փոխառություն:

ինչպես հայտնի է, համաշխարհային մշակույթի, գիտության զարգացման վրա անուրանալի է հունական և հռոմեական քաղաքակրթությունների դերը, որի հետևանքով գիտության, արվեստի բոլոր բնագավառներում հսկայական թիվ են կազմում հունալատինական ծագումով բառերը, որ, ինչպես ընդունված է ասել, «չեզոք» են: (Մի քանի հոդվածներում անդրադարձել ենք տարբեր լեզուներից հայերենին անցած հատկական փոխառություններին)¹:

Հ. Աճառյանը գրում է, որ նախաքրիստոնեական շրջանում հայերենը հունարենից ոչ մի ազդեցություն չի կրել, և հայերը հույներից ոչ մի բառ փոխ չեն առել (սլավների նման) նախքան քրիստոնեությունը²: Սակայն քրիստոնեության մուտքով հունարենի ազդեցությունը մեծանում է: Հատկապես բյուզանդական մշակույթը մեծ ազդեցություն է թողնում հարևան երկրների, այդ թվում Հայաստանի մշակույթի վրա: Պետք է նշել, որ բյուզանդական մշակույթը պահպանել էր անտիկ ավանդույթները: Միջնադարյան եվրոպական մշակույթը հունահռոմեական մշակույթի և տեղական ժողովուրդների մշակութային համադրության արդյունք է:

Ակադ. Գ. Զահուկյանը³ նախագրային շրջանից հունարենից հայերենին անցած բառերի հնարավոր թիվը համարում է 107, որոնցից լատինական ծագում ունեցող բառերի քանակը՝ 12:

Գրաբարը հունարենից փոխառություններ կատարել է 3-4-րդ դարերից: Դրանց թիվը հասնում է 918-ի, որոնք վերաբերում են տարբեր ոլորտների: Շատ են եկեղեցական պաշտոնեությանը և քրիստոնեական դավանաբանությանը վերաբերող կրոնական բառերը: Հ. Աճառյանը, հենվելով իր «Հայերեն արմատական բառարանի» տվյալների վրա, հունարենից հայերենին անցած բառերի ցանկում ընդգրկում է 1066 բառ, որոնցից 151-ը լատինական ծագում ունեն և հայերենին են անցել հունարենի միջնորդությամբ⁴: Հ. Հյուբշմանը հավանական է համարում հունական բառերի «մուտքը» հայերեն հիմնականում սասանյան ժամանակաշրջանում.«...և հազիվ թե, լավագույն դեպքում միայն հազվադեպ, նշված ժամանակաշրջանին նախորդած լինի, քանի որ

¹ Տե՛ս Պապիկյան Ս., Արաբական ծագման հատկական փոխառությունների քննություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2021, N 10, էջ 341-349, նույնի՝ Հատկական փոխառությունների քննություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2021, N 11, էջ 313-323, նույնի՝ Իրանական ծագման հատկական փոխառություններ, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2022, N 1 (26), էջ 77-85, Թյուրքական ծագման հատկական փոխառությունների քննություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2023, N 14, էջ 310-320, Ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ: հայերենին անցած հատկական փոխառությունների քննություն, ՎԷՄ համահայկական հանդես, 2023, ԺԵ(ԻԱ) տարի, թիվ 4(84), հոկտեմբեր- դեկտեմբեր, էջ 305-320:

² Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ), մաս 2, Ե., 1951, էջ 7:

³ Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 617:

⁴ Աճառյան Հ., նշվ. աշխ. էջ 5-53:

դրանցից ամենահները ակնհայտորեն քրիստոնեության հետ են մուտք գործել հայերեն...»¹:

Հունարենից կատարված փոխառությունները հիմնականում գրական ճանապարհով են անցել հայերենին:

Հունական ծագման հատկական փոխառություններից դիտարկել ենք հետևյալ բառերը. ագապ/ե/, գլոստոլալիա, իգումեն, կալտեխիզիս, սիրտակի: Նշված բառերի մի մասը հատկական փոխառություն համարելը որոշ չափով պայմանական է: Ինչպես նկատելի է, դրանց մի մասը վերաբերում է տարբեր տերմինահամակարգերի՝ կրոն, գիտություն, արվեստ: Ի տարբերություն հատկական փոխառությունների՝ տերմինները, կարելի է ասել, ստեղծվում են հիմնականում հունալատինական ծագումով արմատներով կամ եղած բառերի գիտակցված վերափոխման արդյունքում փոխաբերացում-տերմինացումով:

Լատիներենից փոխառված հատկական փոխառություններից դիտարկել ենք պապրիկ, պիլիգրիմ, պլեբեյ, փոգա, փունիկա բառերը²:

Դիտարկենք այդ բառերը³:

Ագապ (ե)⁴ հուն. ἀγάπη՝ agap(e) «1. Սեր: 2. Եղբայրական հացկերույթ վաղ շրջանի քրիստոնյաների մոտ» (ՃԴԲԿ⁵, 17)՝ «Սէր. սիրելու. որպէս հացկերույթ. կերակուր արարեալ ի սիրոյ և միաբան սիրով՝ մանաւանդ ի պէտս ողորմութեան աղքատաց, և յօժանդակութեան հոգւոց ննջեցելոց»⁶, «Ագապ յորջորջիւր առ նախնեօք խրախճանն կամ սեղանն, զոր պատրաստէին հաւատացեալն ուտել ի գաւիթս եկեղեցւոյ զկնի հաղորդութեան» (ՀՀԲ⁷, 3): Ագապ(ե) բառը թարգմանաբար նշանակում է «աղքատներին տրված սիրո ճաշ». թարգմանվել է նաև «սէր առնել» կապակցությամբ՝ «հասարակական ճաշ տալ» նշանակությամբ: Աճառյանը կարծում է, որ «բառի գործածութիւնը երևում է մեր մէջ գոնէ 2 դարուն» (ՀԱԲ⁸, 1, 76): ՀԲԲ-ում⁹ «1.

¹ Հյուբման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2004, էջ 390:

² Ինչպես հայտնի է, Ապենինյան թերակղզու կենտրոնական մասերում ապրող լատիները Ք.ա. առաջին դարում նվաճում են ներկայիս Իսպանիան, Պորտուգալիան, Գալիան՝ ներկայիս Ֆրանսիան, Դակիան՝ ներկայիս Ռումինիայի և Մոլդովայի տարածքները և գրավյալ տարածքներում բռնի տարածում լատիներենը: Լատիներենը հին հռոմեացիների լեզուն էր: Հռմեական կայսրության անկումից հետո լատիներենը կորցնում է իր դերը /5-րդ դ./, բայց շարունակում է գործառնել որպես միջազգային գիտական լեզու, դիվանագիտության և բժշկագիտության լեզու:

³ Բառերի բացատրությունները տրված են ըստ գրականության ցանկում նշված բառարանների:

⁴ Տե՛ս Պապիկյան Ս. Հայերենի կրոնական-լեզվական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, Ե., 2011, էջ 111-118:

⁵ Տե՛ս Дворецкий И., Древнегреческо-русский словарь (այսուհետև՝ ՃԴԲԿ) , Մ., 1958:

⁶ Աւետիքեան Գ., Սիրմելիան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հհ. 1-2, Վենետիկ, Ս.Ղազար, 1836-1837 թթ.:

⁷ Մ.Սեբաստացի, Բառգիրք Հայկազեան լեզուի, Ի Վենետիկ, 1749:

⁸ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հհ.1-4. 1971-1979:

⁹ Մախասեանց Ստ, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944-1945 թթ.:

Քրիստոնէութեան սկզբնական շրջանում հաւատացեալների համայնական ընթրիք ի յիշատակ խորհրդաւոր ընթրիքի, որի ժամանակ մասնակցողները համբարում էին միմեանց ի նշան հաշտութեան: 2. Մատաղ» (ՀԲԲ, 1, 3): Օր.՝ «Ես չգիտեի, որ Աստված Սեր է, Ագապե և Աստծո սերն է իմ մեջ հորդել»: Օքրո Օքրոյան, Բանաստեղծություններ¹:

Ագապ արմատով կամված են *ագապարեր* և *ագապարուն* բառերը: *Ագապի* ձևով, բառիմաստի նեղացումով բառը դարձել է իգական անձնանուն. տեղի է ունեցել հասարակ անուն- հատուկ անուն անցում:

Գլոստոլալիա < ռուս. глоссолалия < հուն. < glōssa՝ *անհասկանալի բառ*+lalēō՝ *խոսում եմ*: 1. կրոն. Որոշ կրոնական աղանդներում էքստազի վիճակում արտահայտած անիմաստ բացականչություններ: 2.գրկն. Բանահյուսության մեջ՝ մոգական կախարդիչ հնչյունակապակցություններ²: Հայերենին անցել է ռուսերենի միջնորդությամբ: Բառն ունի նաև տերմինային արժեք, հանդես է գալիս կրոնական և գրականագիտական տերմինահամակարգերում. արտահամակարգային բազմիմաստության դեպք է: Իգումեն < հուն. ἔγμενος՝ առաջնորդող: կրոն. Ուղղափառ եկեղեցու վանահայր: Օր. «Ռուս ուղղափառ եկեղեցուց իգումեն Դանիլը անդրադարձավ Նարեկացու պոեմին՝ հավատքի ժամանակակից որոշ ըմբռնումների ասպեկտներով»: Ազգ, 2004..07.28: **Իկոն** (հուն. eikōn՝ «պատկեր, կերպար, տեսիլք, պատկերացում և այլն») (ДГРС, 463): Ըստ Աճառյանի՝ «Յունաց եկեղեցական պատկեր» (ՀԱԲ, 2, 240-241, ՀԱԲ³, 284): Բառը հունարենից փոխառությամբ անցել է շատ լեզուների՝ ռուսերենին, լեհերենին, չեխերենին⁴ և այլն: Ըստ գրաբարի բառարանների՝ եզակի վկայություն է ուշ շրջանից (Գ.Տաթևացի):

Օր.՝ «Չեմ կարծում, թե ռուսական որևէ վանքում, եկեղեցում, մատուռում այնքան *իկոնա*, կանթեղ և սրբերի պատկերներ լինեն, որքան կա թագուհու առանձնասենյակում և մանավանդ ննջարանում»: Ստ. Զորյան, Հուշեր, դեպքեր և դեմքեր, ակնարկներ: **Կատեխիզիս** < հուն.՝ katēchēsis՝ *խորհուրդ, խրատ*: 1. կրոն. Քրիստոնեական դավանանքի համառոտ շարադրանք՝ *հարց ու պատասխանի ձևով*: 2. փխբ. Որևէ ուղղության՝ ուսմունքի հիմնական սկզբունքների շարադրանք: Տեղի է ունեցել բառի բազմիմաստացում: Հայերենին անցել է ռուսերենի միջնորդությամբ:

Սիրտակի < **հուն. syrtaki՝** հպում: արվ. Հունական խմբային պարի տեսակ: Ստեղծվել է «Հույն Զորբան» ֆիլմի համար, ապա լայն տարածում գտել ամբողջ աշխարհում, իսկ

¹ Օրինակները բերված են «Արևակ» արևելահայերենի կորպուսից՝ <http://www.eanc.net/EANC>;

² Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան,, (այսուհետև ՕԲԲ), Ե. 2011, էջ 126, Словарь иностранных слов, М., 1949, 169.

³ Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան(այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 2010:

⁴ Ռուսերենում *икона* բառը բացատրվում է „У верующий предмет поклонения – изображение бога, святого или святых в виде портрета в красках, (տե՛ս С.Ожегов, Словарь русского языка, М., 1970, 240).

պարը դարձել է Հունաստանի խարհորդանիշներից մեկը: Այս բառը համեմտաբար նոր փոխառություն է: Օր.¹ «Աննայի կաթնագույն կլոր դեմքն ու կյանքի բոլոր պարագաներում շողար ծակող աչքերը հեշտությամբ առանձնանում էին թե՛ ֆլամինկո, թե՛ սիրտակի, թե՛ աշնակցիների պարը պարողների խմբերում»: Ա. Հովհաննիսյան, Դարձ նավահանգիստ: **Պատրիկ** < լատ. patricii < pater՝ հայր: պատմ. 1. Արտոնյալ դասի ներկայացուցիչ հին Հռոմում: 2. Միջին դարերում՝ գերմանական կայսերական քաղաքների քաղաքային արիստոկրատիային պատկանող անձ: 3. Միջնադարյան Հայաստանում՝ արաբական իշխանության կողմից նշանակված կառավարիչ իշխան¹: Պատրիկները միջնադարյան եվրոպական քաղաքներում կառավարող վերնախավի ներկայացուցիչներն էին: Օր.¹ «Ինչպես գիտես, սիրելիդ իմ պատրիկ, ես կայսեր հրամանով բյուզանդական Հայաստանից ժողովել եմ չորս հազար այրուծի՝ մայրաքաղաք ուղարկելու»: Ս. Զորյան, Սմբատ Բագրատունի: Պիլիգրիմ < լատ. peregrinus՝ օտարական: կրոն. Ուխտավոր, թափառական կրոնավոր: 2. խսկց. Թափառական: Օր.¹ «Ողջո՛ւյն պիլիգրիմ ասպետին. Ձեզ ծառա Ալֆոնս Անդո»: Ե. Չարենց, Ասպետական: Պլեբեյ < լատ. plebejus < plebs՝ հասարակ ժողովուրդ: 1. պատմ. Հին Հռոմում՝ ստորին դասի ներկայացուցիչ, որն անձնապես ազատ էր, բայց զուրկ քաղաքական իրավունքներից: 2. փխբ. Ոչ ազնվական ծագում ունեցող՝ ստորին խավերից ծագող քաղաքացիների արհամարհական անվանումը: Օր.¹ «Նրանց համար ինքը թերուա ճեմարանական է, նեղճակատ պլեբեյ»: Ա. Ռիբակով, Արբատի գավակները: Տեղի է ունեցել բառի բազմիմաստացում: Տոգա (լատ. toga, շեգո՝ ծածկել): Հին Հռոմի քաղաքացիների վերնահագուստ, թիկնոցի տեսակ: Օր.¹ «Կարմրավուն մաշված տոգա հագած մի շինական էր, որ բռնել էր տասներկու տարեկան տղայի ձեռքը և աղաչական հայացքով օգնություն էր խնդրում»: Հ. Խաչատրյան, Արտաշես: Տունիկա < լատ. tunika: պատմ. Հին հռոմեական կարճաթև կամ անթև զգեստ: «Բաց գլուխը դնելով ձիու բաշին՝ նա սլանում էր միայն մեկ տունիկա հագին, կույրի պես, առանց առաջ նայելու, ուշք չդարձնելով խոչընդոտներին...»: Հ. Սենկևիչ, Յո Երթաս:

Ըստ «Արևակ» արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների՝ վերոբերյալ բառերի հաճախականությունը հայերենում ներկայացնում է հետևյալ պատկերը. *ազապե* – 2 համատեքստ, 2 տեքստ, *իգումեան* – 2 համատեքստ, 2 տեքստ, *սիրտակի* – 2 համատեքստ, 2 տեքստ, *պապրիկ* – 281 համատեքստ, 180 տեքստ, պիլիգրիմ- 1 համատեքստ, 1 տեքստ, *պլեբեյ* – 16 համատեքստ, 9 տեքստ, *տոգա* – 9 համատեքստ, 8 տեքստ, *տունիկա* – 5 համատեքստ, 4 տեքստ: *Կարեխիզիս* և *գլոստլալիա բառերը* «Արևակ»-ում վկայություն չունեն:

Եզրակացություն

Դիտարկված հունալատինական ծագման հատկական փոխառությունների քննությունից պարզվում է, որ դրանց մեծ մասը հաճախական չէ: Սրանց մի մասը,

¹ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե. 1976, էջ 1198:

ենթարկվելով իմաստափոխության տարբեր հիմունքներով, ձեռք է բերել փոխաբերական գործածություն:

Դրանցից բառիմաստի փոփոխություններ են կրել՝

1. բառիմաստի նեղացում՝ *Ազապի*,
2. բառերի մի մասը ձեռք է բերել նոր, փոխաբերական իմաստ. երբեմն փոխաբերական իմաստն ավելի հաճախական է: *կապեխիզիս*, *պապրիկ*, *պիլիգրիմ*, *պլեբեյ*,
3. ձեռք են բերել տերմինային արժեք և գործածվում են տարբեր տերմինահամակարգերում՝ *զլոստոլալիա*, *իկոն*, *կապեխեզիս*:

Համառոտագրություններ

ԱՀԲԲ – էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան

արվ.- արվեստագիտական

գրկն - գրականագիտական

լատ. – լատիներեն

խսկց.- խոսակցական

կրոն.- կրոնական

ՀԱԲ – Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան

ՀՍԲ – Գ. Զահուկյան – Հայերեն ստուգաբանական բառարան

ՀԼՊ – Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն

ՆՀԲ- Ալետիքեան Գ., Սիրմելիան Խ., Ալգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի

հուն. – հունարեն

պատմ.- պատմական

փխբ. – փոխաբերական

ДГРС – Древнегреческо-русский словарь

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան էդ.- Արդի հայերենի բացատրական բառարան, Ե. 1976:
2. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1951:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ.1-4. 1971-1979:
4. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Ե. 2011:
5. Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2004:
6. Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944-1945 թթ.:
7. Պապիկյան Ս., Հայերենի կրոնական-լեզվական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, Ե., 2011:
8. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

9. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
10. Աւետիքեան Գ., Սիրմելիան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի.
11. հհ.1-2, Վենետիկ, Ս.Ղազար, 1836-1837 թթ.:
12. Մ.Սեբաստացի, Բառգիրք Հայկազեան լեզուի, Ի Վենետիկ, 1749:
13. Дворецкий И., Древнегреческо-русский словарь , М., 1958:
14. Ожегов С. - С.Ожегов, Словарь русского языка, М., 1970,
15. Словарь иностранных слов, М., 1949,
16. «Արևակ» արևելահայերենի կորպուս՝ <http://www.eanc.net/EANC>.

A STUDY OF EXOTICISMS OF GREEK-LATIN ORIGIN

PAPIKYAN SILVA

PhD in Philology, Associate

Professor

Senior Researcher at the Languagee Institute after

H.Acharyan, NASRA

e-mail: papikyansilva@yandex.ru

Exoticisms, standing out among general borrowings, are characterized by the fact that they refer to the culture, habits, objects and mentality of a nation. They are usually used when talking about realias characteristic of that nation. They are untranslatable, have no synonyms and antonyms, such as *sari*, *ikebana*, *kimono*, *geisha*, *machete*, *muzhik*, *chastushka*, *yatagan*, *vizier*, *mikado*, *shah*, etc.

Exoticisms are divided into 2 groups with narrow and wide scopes of usage. Unlike terms that express concepts related to any field of science, technology, culture and are common in many nations, exoticisms are included in the vocabulary of other languages, the linguistic community of which may not be familiar with the culture and customs of the borrower nation. This mainly happens through translated literature and the media and they often gain international popularity.

Our goal in this article is to study the exoticisms of Greek-Latin origin, some of which are direct and some are mediated borrowings. As they spread, exoticisms initially appear in 1-2 languages, and then supplement the number of terms, eg. *tsunami*, *tornado*, etc. In some cases, it is difficult to determine the boundaries between exoticisms and terms.

Keywords: *exoticisms, term, realia, extension of meaning, restriction of meaning, direct borrowing, mediated borrowing.*

ИЗУЧЕНИЕ ЭКЗОТИЗМОВ ГРЕКО-ЛАТИНСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

ПАПИКЯН СИЛЬВА

*Кандидат филологических наук, доцент
Старший научный сотрудник Института языка им. Р.*

Ачаряна НАН РА

электронная почта: papikyansilva@yandex.ru

Экзотизмы, выделяющиеся среди общих заимствований, характеризуются тем, что относятся к культуре, обычаям, предметам и менталитету народа. Их обычно используют, когда говорят о реалиях, характерных для данного народа. Они непереводаемы, не имеют синонимов и антонимов, как, например, *сари, икебана, кимоно, гейша, мачете, мужик, частушка, ятаган, визирь, микадо, шах* и др.

Экзотизмы делятся на 2 группы - с узкой и широкой сферой употребления. В отличие от терминов, выражающих понятия, относящиеся к какой-либо области науки, техники, культуры и общих для многих народов, экзотизмы входят в лексику других языков, языковое сообщество которых может быть не знакомо с культурой и обычаями нации заимствования. В основном это происходит через переводную литературу и средства массовой информации. Они часто приобретают международную популярность.

Целью нашей статьи является изучение экзотизмов греко-латинского происхождения, некоторые из которых являются прямыми, а некоторые – опосредованными заимствованиями. Экзотизмы, изначально появившись в 1-2 языках, по мере распространения могут дополнить список терминов, напр. *цунами, торнадо* и т. д. В ряде случаев трудно определить границы между экзотизмами и терминами.

Ключевые слова: экзотизмы, термин, реалии, расширение значения, ограничение значения, прямое заимствование, опосредованное заимствование.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.09.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 26.09.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: